

երեւիցիմ¹ առաջի տեառն, առն եղեալ որդի, իբրեւ զանգամ², որպէս մեծ առաքեալն Պաւլոս՝ այլ քո տեառն, քրիստոսանմանութեամբ տարեալ, ներելով անգամութեանս իմում՝ ընկալ՝ զիս իբրեւ զանգամ³:

21 Չկեալ զիմ⁴ ի տղայութեանս՝ զայն տերդ իսկ ինքնին քաջ գիտէ: 22 Տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի ի Զոռոմս՝ ժամանակեցի անդ ամս⁵. եւ եկեալ անտի⁶ կեցի առ Կամսարականսդ յամենայն ամբոխսն, մինչեւ յամս Նուաճման ձերոյ: 23 Եւ զհետ այնորիկ, որպէս թէ ձանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն՝ կամեցայ⁷ պարապել⁸ աղաւթից եւ հանգչել: 24 Եւ երթեալ ի Սիւնիս՝ կեցի անդ ամս երկուս, զձմեռն ի քարայրի, առ առն միում հռչակելոյ ի բնակչաց գաւառին յամենայն կրանաւորութիւնս, որում անուն էր Մովսէս, եւ տեղին անձուկ. եւ զամառն, յաղագս տաւթոյ⁹ տեղւոյն, քահանայապետ¹⁰ աշխարհին տէր Մուշէ տանէր զիս առ ինքն՝ ո՛ր եւ լինէր ի հովու:

25 Արդ՝ զառաջին կելոյն իմոյ զվարս տէր Ներսէս եւ Զրահատ¹¹ Կամսարական գիտեն. զՍիւնեացն՝ յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին: 26 Եւ դու յայց ելեալ¹² ինդրել զիս, եւ գտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն, ոչ իբրեւ զաղքատ զոք ի կազմածէն եւ ի մանկտւոյն, եւ ոչ իբրեւ աստար զոք¹³ ի քէն եւ կամ զծառայ ուրուք. քանզի պարեգաւտաւորք ազատեալ են ի Քրիստոս: 27 Իսկ որ զատոյցն զիս պարեգաւտիւք ի ծառայութենէ¹⁴ աշխարհիս եւ ազատութեան եղեւ մեզ¹⁵ առիթ, տէր Աղան¹⁶՝ քո տեառն քեռի էր: 28 Ըստ այդմ¹⁷ մասին ի Զայս քեզ տեառն անկ էի:

29 Դարձեալ՝ երանելի մայրն քո յորժամ առ բղեշխն¹⁸ ած զձեզ, յորում դրան եւ զմեզ ուսուցանէին, սակայն թեպէտ եւ ըստ տիոց աւագագոյնք քան

1 Վ. երեւիցեմ

2 Ձ. *սրդի իբրեւ զանսգամ. շղագրով ուղղած՝ որդի

3 Ձ. զանսգամ

4 Վ. զկեալ զիս

5 ՏՏ. չիք ամս

6 Ձ. անդի

7 Ձ. կամեցա

8 ՏՏ. պարապիլ

9 Վ. տօթոց

10 Վ. քահանայ

11 ՁՎԱտ. Զրատ

12 Վ. հարց ելեալ

13 Վ. եւ ոչ օտար զոք

14 Ատ. ի ծառայութեան

15 Վ. մեզ եղեւ

16 Ձ. տէր ալան

17 Վ. քո քեռի էր: Լաւ այդմ

18 Վ. բղեաշխն